


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տեղիւն ԱՐՇԱՆՈՅՍ թագրի  
ԳԱՇԻՐԷ (Նաւակաստրի)  
Թիւ

E. TOROSSIAN  
Direc.-propr. du journal arménien  
ARCHA LOUISE  
LE CAIRE (EGYPTE)  
Boîte Postale No.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահիկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ձրակն	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՆԸ ԿԱՆԽԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
հոնքագրութեան վրայ է :

հոնքագրութեան ուղղուած  
գրութիւնք էս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ վճարելի են

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱՆՈՅՍԻ

Բ - ՏԱՐԻՈՅ

Առաջիկայ 101րդ թուով կ'սկսինք Ար-  
շաւոյսի Բ . տարին և ինչպէս ասկէ առաջ  
ծանուցած ենք , հաստատամտութեամբ պի-  
տի շարունակենք այս տարի ևս :

Մեր Պատ . բաժանորդներէն անոնք որ  
պիտի շարունակեն ընդունիլ Բ . տարւոյ  
թերթերը և անոնք որ նոր բաժանորդագրու-  
ուիլ կ'ուզեն , թող հաճին ծանուցանել մեզ  
գրաւոր կամ բերանացի :

Աւելորդ պիտի ըլլայ ըսել թէ՛ թեր-  
թին գոյութիւնը և յարատեւութիւնը վերջ-  
նապէս կ'ապահովուի , երբ մեր ջանքերուն  
կը միանայ մեր արգոյ ազգայնոց գործնական  
քաջակերութիւնը :

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆ

Մշակ , իր 19 Յուլիս 132 րդ համարով  
կը բերէ մեզ մահադուժը Պ . ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾ-  
ԵԱՆԻ , որ ծանր հիւանդութենէ մը վերջ  
տեղի ունեցած է անցեալ Յուլիս ամսոյ  
17 ին Մոսկուայի մէջ :

Այս անգամ հանրահռչակ գրագէտը ,  
աշուուհոգի իրաւաբանը , Մեծ ՈՐԲԱՍԷՐՆԷ  
որուն կենաց թելը կը կտրի Պարկայից հա-  
տու մկրատովը :

Հանգուցեալ Գրիգոր Զանչեան ծնած  
է 1851 ին և 23 տարեկան հասակին մէջ ,  
1874 ին , Մոսկուայի Համալսարանին իրա-  
ւաբանական բաժանման դասընթացքը ա-  
ւարտած և այնուհետև նուիրուած է մասամբ  
փաստաբանական և գլխաւորապէս գրական  
գործունէութեան :

Անցեալ տարւոյ նոյմ . 20 ին Մոսկուա-  
յի մէջ մեծ չքով տօնուեցաւ Զանչեանցի  
գրական-հասարակական գործունէութեան  
25 ամեայ յօբելեանը և գեռ տարի մը չի  
բոլորած զայն ողբալու կը պարտաւորինք :

Արդէն Արշալոյսի ընթերցողները հա-  
մառօտ կերպով ծանօթացած պէտք է ըլլան ,  
որբախմամ գործին մէջ , Մեծ ՈՐԲԱՍԷՐԻՆ  
դէպի հայ որբերը ցոյց տուած աննման հո-  
գածութեանը ու սիրոյն և բրած անբազա-  
տելի ձեռնաուղծութեանը :

Մշակ , իւր վերջին համարով մէկ ամփոփ

Թուիքը կ'ընէ հանգուցելոյն բարեմասնու-  
թեանց և որբերու տեսակէտով ըրած բա-  
րերարութեանց , յաջորդ թուով զայն մեր  
ընթերցողաց ներկայացնել պատշաճ կը հա-  
մարինք :

ԱՍՊԵՏԱԿԱՆ ՈԳԻՆ

Տաղտկալի օրէնքներու լմնցած տեղին է  
որ կ'սկսի ասպետին արևը փայլիլ :

Մարդոց կողմէ հաստատուած ամէն  
ձեւ ( ժողովրդ ) միշտ փոփոխութեանց են-  
թարկուած է և յաւետ չէ՛ յաջողուած ար-  
մատական դարմանը տանիլ ժողովուրդնե-  
րու ցաւերուն . որով անհատական , խմբա-  
յին ու ազգերու կռիւները գաղափար չ'են ա-  
ւած :

Եթէ երբ՝ մի լուսաւոր դար՝ ետ առ-  
նէր ժողովուրդներէն բարձր տնտեսական ,  
քաղաքական տաղանդներ , հաւատալի է որ  
խիտ փոքր համեմատութեամբ նորէն  
մարդը մղուէր , լինի այդ սիրոյ , գեղեց-  
կութեան կամ մտածունքներու տարբերու-  
թեանց պատճառով :

Հասարակական աշխատութեանց մէջ  
այս կամ այն օգտակար գործը չէ՛ թէ  
գծուած օրէնքներով առաջ կը տարուի՝  
հապա գործիչներու բարոյական ու մտաւո-  
րական արժանիքէն կախում ունի իր յա-  
ջողութեան չափը :

Եւ ո՛ր որ զգալապէս կը կարօտուի վեհ  
ու ազնիւ գործողներու , հոն աւելի կը  
վիտան լիտի . անբարոյականացնող ա՛յն  
տարերը , որք յատուկ են իրենց կոչմամբ  
աւրելու , ապականելու , սրբապղծելու և  
մատնելու :

Աչքի առջեւ ունինք կղերը , կեղծ յե-  
ղափոխականը , ու ինքնահաւան հրապարա-  
կագիրը :

Ատոնք չ'են ամէնար քրքիչներ արձա-  
կել նոյն իսկ , երբ անհատի ու ազգի շահն  
ու պատիւը ոտքի տակ կ'երթան :

Մեր այնքան սիրելի նահատակներու  
յիշատակին հայհոյելով , ազատ կ'ըզան  
ինքզինքսին լոյսին ու պահանջին դէմ ալ  
բարբառելու :

Ժողովուրդը պէտք է բնորոշէ ասանկ-  
ներու արժանիքը : Ո՛չ . ո՛չ . Հայն ալ  
պէտք չ'է մոռնայ իւր վարած թողլ ու մեղկ  
կեանքէն շատ աւելի օգտակար սխալակա-  
նութիւնները :

Ասպետի ոգւով կենդանացնելու ենք  
մեր մէջ դեռ չ'մեռած յատկութիւն-  
ները :

Այսքան կորուստներէ վերջ հարկ էր  
որ զիրար գրկած ինքնաճանաչութեան  
ուղին ձեռք առնելով կուռէինք խաւա-  
րին դէմ . սակայն գեռ ա՛յնքան թմրած ենք  
որ , աւելի ազգու դասեր հարկաւոր են  
մեզ . կարենալ տեսնելու համար թէ՛ ո՞րն է  
մեր թշնամին և ո՞րը մեր բարեկամը :

Հասարակական գործիչը հաւատարիմ  
իր գաղափարներուն իր անձին փառքը  
ընդհանրութեան օգտին մէջ փնտռելու է  
գիտակից իր տուած հարուածին ու գոհ  
ստացած վէրքերէն :

Ընկերներէն դառնապէս վիրաւորուած  
ասպետը , համոզուած է թէ՛ իրաւաբանական  
տափակ վճիռներով սրտեր պիտի չ'ամոք-  
ուին , ձայնի իրաւունքը կ'ուսայ պողպատ-  
եայ դատաւորներու , որպէսզի որոշուի ճա-  
կատագիրը :

Յաղթողը իյնողին համար դող կ'ելլայ  
սխալագին , իսկ մահամեծք գոհ ընկերին  
պարտաճանաչութենէն կը խնդրէ թողուլ  
զինք ու զբաղուիլ՝ միայն Հայրենիքի ցա-  
ւերով :

Երկուքը միեւնոյն միջավայրի մէջ պի-  
տի չ'կարենային ապրիլ . պիտի չ'ուղէին  
դաւեր հիւսել , պիտի չ'մուրային ասոր  
անոր պաշտպանութիւնը :

Ուսած սրտով գիմեցին ասպետի ու  
գիին՝ որն իր սուր մկրատովը բաժնեց եր-  
կու գոտածները :

Մեր գործիչները , հրապարակաւ խօ-  
սողները և այլն կը յիշեն արդեօք անկեղ-  
ծօրէն « Հայրենիքի ցաւերը » երբ իրենք  
ալ լարուած են մէկզմէկու հետ :

Ասպետի քայլով անցնելը . միթէ ազ-  
գի մը փրկութեան է՛ն լաւ գրաւականնե-  
րէն մին չէ՞ :

9) 8) 900 Գահիրէ ՀԱՄԵՆՆԵՍԻ . Ս .

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն  
Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

Թուրք կառավարութեան ներքին կեանքը  
չոչափող , և քաղաքականութեան շուրջը դար-  
ցող թէ՛ պատմական անցեալին եւ թէ՛ ներկա-  
յիս մէջ զանազան գործողութիւններու գրու-  
թիւնները — որոնք հաստատուած զուտ ճշմար-  
տութիւններ են — եթէ ոչ ամբողջ մանրամաս-  
նութիւնները — որոնք մարդկութեան պատմու-  
թեան մէջ սեւ էջերով արձանագրուած են , կ'ար-  
ձանագրուին ու պիտի արձանագրուին . քանի  
այդ հրէջ կառավարութիւնը գոյութիւն ունե-  
նայ — մենք հայերս ամեն ազգերէ աւելի պէտք  
ունինք գիտնալ այդ գրութիւններու բուն ո-

գին, լաւ բմբուսելու համար որպիսի մէկու մը հետ գործ ունենալիս: Մեր ամենափոքրիկ մէկ սխալը, մեզ կը տանի յաւիտենական անդունդը, որուն մէջէն Աստուծոսանի պէս հզօր պետութեան նման տէրութիւններու ձայնը հազիւ լսելի են մեր ականջի թմբուկին:

Առանց քահնի մը գործեր ետ երթալու, որոնց ժամանակամիջոցին թուրք կառավարութեան կատարած խժոժութիւնները, զուցէ առնապէս զբուժիչները նկատուէին այժմեան քաղաքակրթութեան աշխարհի, եթէ սկիզբէն ի վեր կաղապարուած ըլլար ձիւնկիւղ-խաներու, Լէնկ-թիմուրներու ու ասոնց նման շատ մը բռնակալներու աւերիչ մահացուցիչ սկզբունքներուն վրայ, եւ չի շարունակեր իր մարդակեր քաղաքականութիւնը մինչեւ մեր օրը մեր ազգին վրայ, մեզ հաւատակից քրիստոնեաներու պաշտպան եւրոպացի կառավարութիւններու եւ քրիստոնեայ մարդասէրներու ակամատեսութեան:

Ինչպէս ըսինք՝ առանց շատ ետ երթալու անցեալ դարուն վերջերէն սկսեալ մինչեւ գաւրուս առաջին քառորդէն ա՛լ աւելի ժամանակամիջոցին, Յունաց շարունակաբար ապստամբութեան ատեն եւ մահաւտող վերջի ժամանակները երբ ապստամբութիւնը միանալուս կերպով պայթած կ'սպառնար թուրք կառավարութեան կեանքին, այն ժամանակի տիրող Սուլթանի հրամանները դժուրի յատուկ լեզուով, աւերել՝ արդէն աւերակ թշուառ Յունաստանը: Ինչո՞ւ:

Որովհետեւ բռնակալութեան ամօթալի եւ անտանելի լուծը թօթափելով ազատութիւն կը ցանկար: Նոյն թուականներուն Սերպերու ապստամբութեան ժամանակ տիրող Սուլթանին հրամաններն էին ջիւղախել գազանային անդրութեամբ ըմբոստ Սերպերը: Ինչո՞ւ: Որովհետեւ ազատութեան ծարաւին էին:

Ու այսպէս շղթայաբար այն ամէն ազգերը, որոնք պատմական անդիմադրելի զգացումով գործ ունեցեր են թուրք կառավարութեան հետ, որպիսիք են, բացի վերոյիշեալներէն, Ռուսներն — այժմեան ազատ ստրուկը թուրք կառավարութեան — Պուլկարիան. Բարատաղը. Լիբանոսը. Երէկուան Կրետէն, եւ տակաւին կոնք շարունակող ուրիշներ: Եւ այս ազգերու ամեն ապստամբութեան ժամանակ տիրող Սուլթանները, — այդ Սուլթանը ըլլայ Մահմուտ Վամ Անձուտ եւ կամ զարգացեալ եւրոպացիի սիտղոս ունեցող Ազիզ կամ Մէճիտ — մի եւ նոյն է. պէտք է հպատակին ժառանգական քաղաքականութեան տրամադրութիւններուն, եւ արձակին այն «նուիրական» հրամանները, որոնք ըմբոստ Գաւալիս մահուամբ միայն կը գաղթին:

Սոյն պատմական սեւ իրողութիւնները հակիթ կերպով դժել վերջ, անցնինք մեր քաղաքական ինքնուրոյն կացութեան մը ձգտելէն ի վեր, թուրք կառավարութեան մեզ հանդէպ ունեցած ընթացքին:

Առանց հին ժամանակները պարզելու, որ ներկային հին պատկերն է. համառօտ կերպով դժեմք Սան-Սթէֆանոյի դաշնագրէն ասդին, որ ա՛լ աւելի լարուած գրութիւն մը ունեցանք, թէեւ խուլ:

Թուրք կառավարութիւնը մեզ հաւածեց ու կը հալածէ. բացի այն սեռակէտէն՝ որ մենք Իսլամ ենք, այլ այն բռնակալներու յատուկ վարտալի ալ, որ մենք Սան-Սթէֆանոյի դաշնագրէն յետոյ սկսած քաղաքական կացութեան մը հեռապատկերով տողորմել:

Եւ այդ՝ թուրք կառավարութիւնը չէր կրնար անտեսել:

Ուրիշն ինչ պէտք է ընել ապագային իր կեանքին սպաննացող այդ ուժը փշրելու համար. — կրկնապատկուած հալածանք:

Հալածանքը սկսաւ անտեսապէս, դնելով հայ ժողովրդի վզին ծանրածանր տուրքեր. ու միւս կողմէն սկսաւ թուրք վաշխառուներու միջոցաւ գրամ տալ հայ ժողովրդին. գիտնալով որ հայ ժողովուրդը, օրինակ. հինգ ոսկի առած գրամը մէկ քանի տարուան մէջ ամենաժանր տոկոսներով պիտի ըլլայ 15-20-30 ոսկի եւ հետեւաբար չի կարողանալով այդ անիծեալ պարտքը վճարել, պիտի ստիպուի բոլոր իւր կալուածները, արտ, այգի, պարտէզ նոյն իսկ

տունը տալ պարտքին տեղ, որ սկսած էր իւր ընտանեկան յարկի պատուին ալ սպառնալ:

Այդպէսով երկու նպատակ ունէր. առաջին նիւթապէս հարստացնել իր ժողովուրդը. երկրորդ հայ ժողովուրդը նիւթապէս ճնշել. որ աւրիշ բաներու վրայ չի մտածէ. եւ հողատիրութիւնէ զրկել՝ որ քաղաքական սեռակէտով մեծ նշանակութիւն ունի:

Այդ չարիքով ալ գո՞չ չէր կրնար ըլլալ. որովհետեւ հայ ժողովուրդը, եթէ ոչ ամբողջութեամբ, դոնէ մեծ մասը երկրին փարօս, զանազան պատուաւոր միջոցներով ինքզինք կապրեցնէր, ու յարմար առթին կրնար իր գլխուն Դիմովիւնի սուր մը ըլլալ:

Ուրիշն դարձեալ ինքզինք ապահով չըզգալով այս անգամ սկսաւ անուղղակի կերպով մամուակի ջարդերը. եւ միեւնոյն ժամանակ կազմեց Համիտիէ գունդը իր սպագայ հրեշտային ծրագրիներն կազմ ու պատրաստ ըլլալու համար եւ այսպէս շարունակեց մինչեւ Սասնոյ կոտորածը:

Նախապէս ծրագրուած ճիւղախելի ջարդերը կ'սկսին Սասունէն եւ ամբողջ Հայաստանը գազանային անգրութեամբ աւերակ դարձնելէն վերջ. հոսպայ կը հանգչի վերջերս կատարուած Այսկիբաթի ինսուրը դիւրի եւ իւր շրջականութեւն աւերակներուն վրայ:

Ո՞վ է այս ջարդերուն կազմակերպող ու գործադրողը. ո՞վ է թուրք մոլեռանդութեան, վարագութեան զսպանիչը իր ձեռք անելով. յարմար առթել լարողը, թէ իր գազանային կիրաւորելու յաղութը տալու. եւ թէ՛ թաթար-Մանուկեան ժառանգական քաղաքականութիւնը աւերած պահելու: Պատասխանը՝ անմահ Կլատթի շատոնց է որ սոււած է աշխարհի. Երբտղի հիւանդին համար:

Արդ այս գրութեանը, որ առիթ տուաւ Կ. Պոլսէն, Բարիք հրատարակող « Լօրիս » ի (Արեւելք) սուլթապաշտպան թղթակցութեան մի արտասպումը Նոր-Օրի մէջ. որ իւր թէ՛ Երբտղի կարմիր Գազանը, գործիք եղած ըլլայ Լուսթի կամ Սուլթի անունով, անձնական քարտուղարին ձեռքը. կամ իրեն սենեկապետ Կատասպաղցի Մուսթաֆա աղայի ճանկին մէջ:

Մեր նպատակը ուրիշ կէտի մը մասին է, սակայն աւելորդ չենք համարել հարցնել:

Ո՞վ է իւր եղբայրը, Սուլթան Սուրաո, գահազուրկ ընող՝ իրեն խնդ բանտարկող ու գահը յափշտակող աւազակը: Ո՞վ էր այնչափ սախալեւան խորամանկութեամբ ջարդերը գործադրող ու պաշտօնապէս օձիքը ձեռք չի տրուող հրէջը:

Պատասխանը՝ Երբտղի վաշխատունը իր յափշտակած եւ հայոց արիւնով ներկուած գահին վրայէն կուտայ:

Ուրիշն ինչ թագուն նպատակ կայ այսչափ բացորոշ կերպով հաստատուած իրողութիւններու հակառակը պնդող գրութիւններու մէջ:

Գիտնալով իր կերպի մարդը ըլլալու պէտքը չկայ այդ գրութիւններու բուն ոգին ըմբոստելու համար: Ինչպէս գիտենք, թուրք կառավարութիւնը ու եւ քաղաքական հարկ զինք նեղը ձգած է. իր գոյութիւնը կամ պատուը — եթէ այս վերջինը իր քով գոյութիւն ունի — ժամանակակից սուրբապետ օգուտած է անուղղակի միջոցներու գիտելով: Օրինակները մենք հոս չենք շատ ունինք երկար թուելու հարկ չկայ: Հայկական ջարդերուն համար, մեծ մարդասպան անունով մկրտուեցաւ, թրքական բռնակալութեան մարտնչուած Համիտ մարդուկը. ուղեց զանազան միջոցներով այդ անունէն ազատիլ որով միեւնոյն ժամանակ շատ մը քաղաքական պատասխանատուութիւնէ ալ զերծ մնալ կը կարծէր:

Եւ այդ միջոցներէն մին է Բարիքի « Լ'Օրիս » ի մէջ հրատարակուած թղթակցութիւնը: « Լ'Օրիս » ի նամակագիր Էֆէնտիկ կը ճգնի կարմիր մարդուկը գայլերէ պաշտուած անմեղ գահազուրկ մը նմանցնել իւր թէ՛ ինքը երբէք տեղեկութիւն չունի եղեր (° ° °) իր երկրին մէջ անցած դարձածներէն. ու այդ զինքը շրջապողներուն է յանցանքը. որք չեն ձգեր եղեր (° ° °) խեղճին որ աչքը բանայ. . . . կ'աւելցնեն կարգ մըն ալ (սուլթանին համար). մեծանձն, իմաստուն, խելացի, վարչապետ բառեր՝ որ ամ-

բողջ թուրք ազգութեան մէջ բացի այդ բառերու իրական նշանակութիւնէն ամեն բան կայ. ու դարձեալ իբր թէ ամբողջ Եւրոպայի համակրանքին արժանացած է:

Այ՛ն, արժանացած է. բայց թուրքին: Մերք սղղակի ո՛չ այդ նամակագիր Էֆէնտիկին պատասխան մը տալու ճանճութիւնը յանձն կառնուեց, եւ ոչ ալ թղթակցութիւնը հրատարակող թերթի տնօրէնին. որովհետեւ իրենց եւ իրենց նմաններուն գոյնը մեզ շատոնց յայտնի է գիտենք այդ Էֆէնտիկներուն հիւանդ մարդուն վարձկանները ըլլալը:

Թուրք կառավարութեան էութիւնը համառօտ կերպով ներկայացնել վերջ, երկու խօսքով դառնանք մեր բուն ըսելիքին, որ ինչպէս վերը յիշած ենք. առիթ տուաւ այս գրութեան Կ. Պոլսէն կամ թուրքի զանազան կողմերէն. նոյն իսկ եւրոպայէն. թէ՛ վարձկան թղթակցները, եւ թէ՛ զանազան կաշտուած թերթերու Տնօրէնները երբէք ո՛ր եւ առիթ չեն փակցներ. թուրքերոյ շուրջը դարձող քաղաքական այս կամ այն իրողութիւնները խեղաթիւրել, խճճել ի նպատակ թուրքի. եւ սուլթանը ու եւ պատասխանատուութիւնէ զերծ պահել յայս եւրոպայի: Մերք եւ մեզի հետ մէկաեղ մարդկութեան ճշմարտապէս մասը թուրք մը ունինք անոնց ստող բերանի արդէն սեւ երեսին:

Սակայն ինչ կը նշանակէ, այդ սուլթանապաշտպան գրութիւնը հայ թերթի մը մէջ արտասպումիլը. որն է տեղւոյս Լուսրան-Ընթերցատուն ընկերութեան օրկանը:

Չենք սիրեր, եւ յանցանք մ'է մեզ կ'արծել թէ՛ « Նոր-Օր » ի Պատ. վարչութիւնն ալ սուլթանի այն վարձկաններուն խուճրին կը պատկանի: Սակայն թերթին Պատ. վարչութիւնը՝ հակասած չի՞ ըլլալ. թէ՛ մեր ազգային քաղաքականութեան ընդհանուր սկզբունքի թէ՛ պատմական այն անհրաժեշտ իրողութիւններուն որ թուրքերոյ Սուլթանը ընդունած է երկրին միայն տէրը, եւ ոչ ոք. կարող է անոր իրաւունքները սահմանափակել, ու անոր անձին վրայ ճնշում բանեցնել մահաւանդ Սուլթան Համիտի պէս սախալեւի մը. եւ թէ՛ « Լուսրան-Ընթերցատուն ընկերութեան կանոնագրին: Մահաւանդ թերթը ընկերութեան մը օրկանը ըլլալով՝ նշանակութիւն մը ունի իր մէջ շոյախուած խնդիրները. որովհետեւ հայութեան մէկ փոքրիկ հատուածին գաղափարները կը ներկայացնէ:

Գիտնանք յոնք շինած ժամանակ, աչք չի հանել:

Յ. ՀԱՆԷՍ

Մեր ապագայ Առաջնորդ՝ Յովսէփ Եպս. Այվազեանի գործունէութիւնը նկարագրող գրութիւններ հետզհետէ կ'երևան Պոլսոյ հայ թերթերուն մէջ:

Եւ որովհետեւ թերեւս ապագայի մէջ պէտքը ունենանք անոնց, այժմէն այդ գրութեանց մէկ մասը մեր ընթերցողներուն ծանօթացնել արժան կը դատենք:

Ահաւասիկ Ռօտտոթոյի Վարչութեան կողմէ Պատրիարքարանի ուղղուած պաշտօնական գրութիւն մը, որ « Բիւզանդիոն » հրատարակած է եւ որուն « Արշալոյս » ի մէջ արտասպումը շահեկանութեանէ զուրկ չենք համարիր:

ՌՕՏՈՍԹՕ ԵՒ ԵԳԻՊՏՈՍ

Ռոտտոթոյի Գուտաական ժողովին կողմէ հետեւեալ ուշադրաւ գիրն ուղղուած է Կեդր. Ազգ. Վարչութեան Ս. Նախագահին.

Ամեն. Սրբազան Տէ՛ր,

Գեր. Յովսէփ Եպսկ. ի հրատարականէն յետոյ, Ձեր Ամեն. Սրբազանութեան կողմէ տրուած հրահանգին համաձայն, նոր Առաջնորդի ընտրութեան համար Ն. Գիւրապատութեան նախագահութեան ներքեւ գումարուած Գաւառ.

ժողովոյ որոշմամբ Արթ. Տ. Մամբրէ քահանան, որ արդէն առաջնորդական փոխանորդ էր, գիտէք թէ վերընտրուած էր իր պաշտօնին մէջ, եւ ըստ այնմ խնդիրը Ձեր Ամենապատուութեան տեղեկագրուած էր ի հաստատութիւն: Ինչպէս Ձեր Ամեն. Սրբազնութեան 23 Յունիս եւ 562 համար պաշտօնագրէն իմացած ենք, Գաւառ. ժողովոյ այս որոշումը կեզր. վարչութեան սեղանին վրայ ըլլալով արդէն, երբ կ'սպասէինք զոնկացուցիչ պատասխանին, նոր անակնկալ մը յայտնուեց կրթից գեղ. զոր կը փութանք հաղորդել իսկութեամբ Ձեր Ամեն. Սրբազնութեան Գեր. Յովսէփ Եպիսկ. Թուականէս երկու օր առաջ մասնաւոր նամակով մը, զոր ուղղած է տեղւոյս վսեմ. կառավարիչ փառային, փոխանորդ Տ. Մամբրէ Հայրը, որպէս թէ հրատարեցընելով իր պաշտօնէն, անոր տեղ փոխառաջնորդ անուանած է Արթ. Տ. Գարեգին աւագ քահանան, որուն ալ այս իմաստով մասնաւոր նամակ մը ուղղած է: Անպաշտօն անձնաւորութեան մը կողմէ պաշտօնի կոչուած այս վերջին քահանան թողունք որ արդէն չընդունիր իրեն առաջարկուած փոխանորդութիւնը, միւս կողմէ բուն փոխանորդը, որուն հետ մէկտեղ նաեւ ժողովոյ շուարած, բնական է որ չի կրնար շարունակել իր պաշտօնը, եւ տեղական կառավարութեան հետ մեր գործերը կը մնան երեսի վրայ:

Տ. Յովսէփ Եպիսկ. իր իսկ կամօք տեղւոյս Առաջնորդութենէն հրատարած, եւ իր հրատարականը Ձեր Ամենապատուութեան կողմէ հաստատուած եւ ինքը քաղաքէս մեկնած ըլլալով, երկու տարի յետոյ իր ընտրած, հաւանած ու գործածած մէկ պաշտօնեան, որուն բարեօրծառայութիւնը վարձատրած է բարեխօսելով Հայրապետին քով, եւ լանջախաչ բերել սալով. վերջապէս, ինչպէս ի վերեւ յիշեցինք արդէն, անոր վերընտրութիւնն իր նախադաճութեամբ կազմուած ժողովոյ կողմէ կատարուած եւ իր կողմէ պաշտօնական կնիքներն յանձնելով շնորհաւորած եւ անոր արժանիքն ամենուստ ճանչցուած ըլլալով, ժողովոյ չի կրնար ո եւ է նշանակութիւն տալ այս վերջին անակնկալին: Ուստի, զժուար չէ ենթադրել թէ Յովսէփ Եպիսկ. ի մէկ քահանայքը վերձակիս թէ՛ ազգային եւ թէ՛ յարաբերական գործերն այնպիսի անել կացութեան մը մասնած է որ, օրէնքի եւ արդարութեան, տարրական սկզբունքի գիտականստ մը չի կրնար այս մասին զսպել իր խորին ցաւը: Այս է անաւասիկ առաջադրեալ խընդիրը, զոր կը փութանք հաղորդել Ձեր բարձր Սրբազնութեան եւ ակնդէտ կ'սպասենք պարտու պատշաճ անօրինութեան:

Ամենապատու. Սրբազնութեան Ձերոյ  
Խոնարհ ծառայք  
Դիւան կրօնական ժողովոյ  
Ատենապետ Ատենադպիր  
Գարեգին Գն. Երամեան Հ. Գն. Իսկեստրեան  
Դիւան Գաղաքական ժողովոյ  
Ատենադպիր Ատենապետ  
Բարսեղ Կիրակէսեան Պետրոս Եւոզսեան  
Ռոտոսթո, 15 Յունիս 1900

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՆՆԱՆԻՍ ՈՒՄՊԵՐԹՕ ԹԱԳԱՒՈՒՐՆ  
Աղէքսանդրիոյ Ազգ. Պատ. վարչութեան կողմէ մեր ստացած մէկ հրաւիրագրէն կը տեղեկանանք թէ՛ վաղը կիրակի 19 Օգոստոս որոշուած է տեղւոյս Ս. Եկեղեցւոյն մէջ յատուկ պատարագ եւ պաշտօն մատուցանել ի հանգիստ հոգւոյ, Ն. Վ. հանգուցեալ Ումպերթօ թագաւորին:

Աղէքսանդրիոյ ազգայնոց եւ Պատ. վարչութեան գէպի Իտալական ազգը եւ անոր հանգուցեալ թագաւորը ցոյց տուած այս համակրական արտայայտութիւնները, որոնք գովեստից արժանի են, յայտնի է թէ՛

պատճառ. պիտի գտնան առաւել եւ սերտացնելու երկու ազգաց մէջ արդէն գոյութիւն ունեցող բարեկամական համարումներն:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Հունիս 15 օր. — Զօր. Կէչլի կը ծանուցանէ թէ՛ Բէյքանկի մօտ Անգլիական կորուստը եղած է 25 հոգի, իսկ Եանկցունկի մէջ 50: Մեծապէս կը գովէ ճարտասցւոց քաջութիւնը եւ կ'աւելցնէ թէ մեր զօրքերը Եանկցունկի պաշտպանութեան առաջին գծերը գրաւեցին հիւնալի կերպով:

Հունիս 15 Օգոստոս. — Հարաւային Ափրիկէի Անգլիական կորուստները 39, 057 ի կը համին առանց հաշուելու հիւնադանոցին մէջ եղողները:

Հունիս 16 Օգոստոս. — Ծովակալ Սէյմուր Եանկհայի գլխարկ կողմը գտնուած զօրաց հրամայեց, գէպի Չինու հիւսիսային կողմը մեկնել:

Վերի կողմը գտնուող հիւսիսայինները հեռագրեցին իրենց կառավարութեանց թէ՛ Հնդկի զօրաց վերադարձը քաղաքը վտանգի մէջ դրած է. եւ թախանձեցին միեւնոյն ժամանակ ուրիշ եւրոպական զօրաց անմիջական առաքումը փութացնել:

Բրէթօրիա 16 Օգոստոս. — Գնդապետ Հէյլար Բրէթօրիայի արեւմտեան կողմը Պօէրներուն կողմէ սպանուեցաւ: Ասոնցմէ երկուքը ձերբակալուելով ուղղակի զրկուեցան զինուորական ատենի առաջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒՍ  
Պիթիւսէն առնուած լուրերու համաձայն, այդ քաղաքին ընդհանուր հրամանատարի արամադրութեան ներքեւ գտնուած զօրքերը Գլխարկու օգնութեամբ Զբաղանք գիւղին հայերը մօտ 200 հոգի կին եւ տղայ շարժած են:

Թուրք զօրավարը այրել տուած է այս գիւղը: Երջակաները գտնուած երեք քաղաքներն ալ աւարի տրուած են: Կ'ըսուի թէ՛ կանոնաւոր զօրքեր զրկուած են այս գիւղերուն մէջ, խռովարարները գտնելու համար խուզարկութիւններ կատարելու:

— Պոլսէն կը հեռագրեն թէ Երլորդ-Գէօզլին պատերուն վրայ Սուլթանին սպառնացող յայտարարութիւններ փակցուած են: Բազմաթիւ ձերբալուծիւններ տեղի ունեցած են եւ ոստիկանութիւնը ամեն զգուշութիւններ ձեռք առած է:

— Պոլիս Գարակէօմրիկի մէջ հրդեհ մը ծագած է որ 119 տուն, 60 խանութ, 12 պիսոռ, եկեղեցի մը, փայտի եւ իւղի բազմաթիւ մթերանոցներ, պանդոկ մը եւ այլն այրեցան: առանց հաշուելու շատ մը տուններ. որոնք հետզհետէ ծաւալման առաջին առնելու համար փլցուեցան:

Ընդհանուր կորուստը կը հասնի 6000 ոսկւոյ:

ՌՈՒՍԻԱ  
Ռուսական թերթերը, առանց բացառութեան Եանկհայէն ստացուած վերջին տեղեկութիւնները չարաչար կերպով կը մեկնեն, որ առիթ կուտայ ենթադրել թէ՛

Անգլիա տարբեր քաղաքականութեամբ մը գաղտագողի կը գործէ, առանց հասարակաց շահերը նկատողութեան առնելու Եանկ-Չէի ընդարձակ երկրին մէջ իր մասնաւոր շահերն ապահովելու համար:

Թերթ մը խորհուրդ կուտայ, գիտել տալ Անգլիոյ թէ՛ եթէ ինքը Եանկ-Չէի պէտք ունի. Ռուսիա ալ Մանչուրիան պէտք է գրաւէ:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

— Էթիէն ՏՕԼԷԻ ՀԱՄԱՐ ԵՂԱՄ ՅՈՅՅԸ  
Չորս հինգ օրերէ ի վեր Բարիզի պատերուն վրայ յայտարարութիւն մը փակցուած էր, որուն ընկերվարականները, յեղափոխականները եւ ազատամիտները հրաւեր կը կարգալին ժողովրդին բլաս Մօպէսի վրայ գտնուող Էթիէն Տօլէի արձանին առջև ցոյց մը կատարելու: Էթիէն Տօլէ 16րդ դարու ազատամիտ եւ լուսեւրական գրող մ'էր, որ 1546 Օգոստոս 3 ին այն բլաս Մօպէսի վրայ կախաղան հանուեցաւ եւ յետոյ այրուեցաւ:

Երեկուան ցոյցը բոլորովին աննշան եղաւ, վասնզի (ցուցահանդէսը չ'վրդովելու համար) ժամը մէկէն սկսած յիշեալ հրապարակը, պուլվար Սէն-Փէրմէնը եւ քովրնսի փողոցները երեք հարիւր ոստիկաններէ եւ չորս հարիւր հասարակապետութեան պահպան զինուորներէ եւ նոյնպիսի հետիոտն զինուորներէ պաշարուած էին: այնպէս որ ցուցարարները չ'էին կրնար մօտենալ արձանին, այլ խուճախ խուճախ գալով պսակ մը կը դնէին արձանին առջև եւ ոստիկաններու առաջնորդութեամբ դուրս կուգային զինուորական ցանկէն: Մենք ամեն կողմ պարտելով աչքի իյնող բան մը չի տեսնաք, քայքայ հետաքրքիր խուճախ բազմութիւնը, որը տարօրինակ զուարճալի բան մը տեսնելու յուսով խուճախ էր բոլոր փողոցներու անկիւնները: Ցուցարարներու մէջ ալ աչքի ընկնող մէկը չ'կար: ամէնքը Բարիզի՛ եթէ կարելի է այսպէս բսել՝ ամենատար խառնիճազանձէն էին:

Յոյցը վերջացաւ ժամը 4 ին, երեկոյին երկու գլխաւոր տեղեր ժողովներ տեղի ունեցեր են ուր միքանի ճառեր են խօսուելու:

ԿԱՌԱՊԱՆՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ  
Բարիզի մէջ հասարակ օրերը տասն եւ ութը հազար կառքեր ժուռ կուգան փողոցներուն եւ բուլվարներուն վրայ, երթեւեկութիւնները գիւրացնելու համար: Այդ կառքերը կը պատկանին զանազան ընկերութիւններու, այնն առաւօտ կառապանները կ'երթան այդ կառքերու պահեստի տեղը եւ 16 էն 20 փր. վճարելով կառք մը կը վարձեն եւ ամբողջ օրը կը գործածեն մարդ տանել բերելու համար: Ընկերութեանց եւ կառապաններու միջև անհամաձայնութիւն մը պատահած լինելով, երեք կիւրակէ, չորս հազար կառապաններ գործադուլ ըրին, այնպէս որ 18 հազար կառքերէն միայն 8 հազարը կը գործէին երեկ, իմեծ գժգոհութիւն երթեւեկող հասարակութեան գաւառներէն եւ օտար երկիրներէն եկող բազմութիւնը, որ չ'էր կրնար կառք գտնել Բարիզի մէկ ծայրէն միւսը երթալու համար:

ՊԱՇԸ-ՊՕԶՈՒԳԻ ՄԸ  
ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՌԻԹԻՆԸ  
Օամանեան հպատակ Իպրահիմ Բէհուի որ իբր պաշտպան ծառայած է Թուրք

ՆՈՐԱՎԱԶՄ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԱՐՇԱԼՈՅՍԻ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԽԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶԲԸ

Օսլանիյե դեղատանին դիմացի փողոցին մեջ:

Տպարանը բաց պիտի ըլլայ ամեն օր, առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին:

Այցելութեան, նշանակութեան, Գիրքեր, Հրատարակութեան, Մանկագրութեան, Տեղեկագիրներ, Կանոնագրութեան, Յոսիս և այլ և այլ վաճառակաւ յանձնարարութիւններ:

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և շարժաւոր գին:

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ:

ԿՈՊԵՌ ՊԵՆԼԵԱՆ

ԵՒ ԸՆԿԵՐ:

ՆՈՐ ԱՌԻՍՆԱԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տասներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած եւ փորձառութիւն ստացած է:

Պաշտոյ մէջ Ապտուլլահ եղբարց տան, ինչպէս եւ ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէճեան գործատան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ՝ առանձին գործատեղի մը կը հիմնէ Էօզպէֆիյե Շարխա Իսմայիլ Օթէլ ՇէֆէրՏՍԻ ճիշտ գիմաց թիւ 3 արարթըմանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս եւ դուրսը կուսկներ ի հարկին:

Ակրանիսիան բնական մեծութեամբ: Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով սրունք երէք չ'են աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ բնական գոյներով միմեքսիս:

Իւզաների եւ յրաների պատկերներ և շինարարութեան և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ողորմաբար, ճիշտագոյնաբար և արագ:

Իրեն դիմող յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մէ:

Տ Հ Ի Մ Ի Զ Ո Ւ Ա Լ Լ Ա Յ Ց

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամեն ինչն աւելի շահաբաժիններ:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպսակարար գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ ուր և է ընկերութեան մէկ միլիարդ աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ իրահիբէ:

ՏՕՔԹ. Ա. Յ. ԳԻՐԵՍՈՒԹԻՒՆ

Ի Շարխա Գոր-Պեյ, թիւ 20

Իր ՁԻ՛ խորհրդակցութիւնները ասկից վերջը, միայն սուրբ օրերը կես օրէ առաջ ժամը (ը. ե.) 9էն 11 սորչած ըլլալով կը խնդրէ մեզմէ ծանուցանել զայդ, ի գիտութիւն իրեն դիմել ուղղ աղքատ հիւանդներու:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Ծերունի Տիար Ս. Ֆէլէկեանի վերոյիշեալ հեղինակութեան ՆՐՐՈՐՊ Ֆորման ալ հրատարակուած է:

Բաժանորդագրուելու փափաքողք, ինչպէս արդէն ծանուցուած է, կրնան դիմել «Արշալոյս» ի ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ. ուր հեղինակը կը գտնուի կէս օրէ վերջ ժամը 5-7:

Գ Ա Ֆ Է Մ Օ Ք Ա

Տիգրան Կոտանեան պատիւ ունի ծանուցանել Արգոյ հասարակութեան թէ՛ վերջերս սկսած է իւր Փաղաք-Մուրի խանութին մէջ պատրաստել Յէմէնի սուրճին ամենաբարձր և անխաղախ տեսակէն իրեն դիմող յաճախորդներ օրան 16 զըռ ուղի հաշուով, զբաւ լաւէ պիտի կրնան գնել կըռոյ մէջ ալ ուղղամտութիւն գտնուելով:

ՏՕՔԹ. ԺՈՐԺ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԹ

Ապրիլ Շարխա Գուրի թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակոսներ:

Կը գաղթեցնէ վայրկեանապէս ակոսից ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակոսներուն տոկոսուածութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երախաւորէ:

Վկայեալ աղքատներու ճրի գարմանում, ամեն օր կէսօրէ ետք ժամը 3-5:

բանակին մէջ. քանի մը ամիս կայ որ Բարիզ եկած էր ցուցահանդէսի առթիւ և շատ մը ուրիշներու հետ կը յուսար բազմ շինել բայց ամենն ալ յուսարաւ եղան:

Տեսնելով որ պարկեշտ միջոցներով չի պիտի կրնար խոշոր գումար մը հաւաքել, հնարքի մը գիմեց. ամենէն առաջ յաջողելու համար տխուրս մը կամ գիւրք մը իւրացնելու էր:

Ինքնիրեն ինքզինքը թրքական բանակի գնդապետ հռչակեց և սրանչեւի ոսկեայ ժապաւէններով համազգեստ մը հագաւ անով. կրնար ուզած տեղը ներկայանալ:

Գնաց այցելութիւն տալու իրեն երկրացի շատ մը անձնաւորութեանց, որք ցուցահանդէսի առթիւ Բարիզ կը կենային. անոնց խղճալի պատմութիւններ պատմեց իր վիճակին վրայ և զանազան պատճառաբանութիւններով ստակներ գանձեց:

Իր հայրենակիցներէն մին ուրիշք դըրամ բացուցած էր, վերջերս ձեռքակալել տուաւ զայն Սէն-Միշէլի ծառուղիին վրայ:

Ի պրահիմ Բէհուի, տեսնելով որ զինքը կը ձեռքակալեն ոստիկանները, կը կատղի, իր հին պաշտպոզութիւնը արեւը կ'երայ երակներուն մէջ և կուսկի հարուածներով կ'ընայ ոստիկաններուն վրայ, բայց մեր թուրքը ոյժ չ'ունենալուն համար պատուական տիպ մը կ'ուտէ և պահականց կը փոխադրուի, ուր կարճաժամ հարցաքննութիւն մը կ'ընեն. որովհետեւ Ի պրահիմ Բէհուի միայն պատասխանած է թէ «Ես թուրք եմ», գացէք թուրք կանչեցէք:» Խեղճ պաշտպոզութիւնը բոնուս զրկուած է:

ՀՆԵՎԱՆԻՐ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns: 01-05, 06-10, 11-15, 16-20, 21-25, 26-30. Row 1: 6250, 3006, 1372, 4932, 5883, 3782. Row 2: 2995, 3539, 6585, 1390, 1067, 4174. Row 3: 4750, 7489, 5787, 7225, 1808, 2949. Row 4: 2769, 5769, 3263, 5919, 531, 6603. Row 5: 2740, 48, 5283.

ՀԱՒԱՔԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածույն գնել փափաքողներն կամ բաժանորդագրուել ուղղներն, կրնան դիմել Արշալոյս ի ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնագիր-Տնօրէնին:

Տիար Մ. Հայկունի աստի ուղեւորելուն պատճառաւ, իւր հրատարակած «Վարդոյր Մարդկային Կենաց» գրքին սակաւութիւ օրինակներն յանձնած է Արշալոյսի ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԸ: Գնել փափաքողք կրնան հոն դիմել:

Քանի մը օրինակ մէկ անգամէն գնողին 20 սու հարկը վեղ կը լինի:

Տպագրութիւն ժՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ